

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Անդրանիկ Ատոմի Մարգարյան

**ՆԵՐԱՌԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝

**Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդվարդ Մարտինի Սանդոյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան**

**Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Վիլեն Վիկտորի Խաչատրյան**

Առաջատար կազմակերպություն՝

**ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի հունիսի 20-ին՝ ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (0025, ք. Երևան, Նալբանդյան փ. 128) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի մայիսի 19-ին

**014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Տ.Ս.Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արենախոսության թեմայի արդիականությունը: Տնտեսական աճի ներառականության գաղափարը տակավին վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում է դրվել գիտական շրջանառության մեջ ու դարձել տնտեսական քաղաքականություն մշակողների և իրականացնողների գլխավոր ուղենիշներից մեկը: Հատկապես զարգացող շուկաներ ունեցող և շարունակական բարփոխումների մեջ գտնվող երկրների համար, որոնցից մեկն էլ Հայաստանի Հանրապետությունն է, տնտեսական քաղաքականության տարբեր գործիքներով տնտեսական աճի ներառականության ապահովումը առավել քան կարևոր է այն իմաստով, որ տնտեսության մեջ տասնամյակներ տևած ինստիտուցիոնալ բարեփոխումներն ու արձանագրված տպավորիչ տնտեսական աճը ոչ միայն չեն բերել բնակչության գերակշիռ մեծամասնության բարեկեցության բարձրացմանն ու կյանքի որակի բարելավմանը, այլև հանգեցրել են աղքատության մակարդակի աճին ու ըստ եկամուտների և ըստ ունեցվածքի բնակչության տարաբևեռ խավերի միջև սոցիալական ճեղքվածքի խորացմանը: Այս տեսակետից ակնհայտ է, որ ՀՀ տնտեսության մեջ արձանագրված տնտեսական աճն իր բնույթով չի եղել ներառական ու հաճախ պայմանավորվել է մակրոտնտեսական քաղաքականության միակողմանի ու անարդյունավետ լուծումներով: Ակներև է, որ երկրում շարունակաբար աճող անհավասարությունը քաղաքականություն մշակողներին և իրականացնողներին պարտադրում է ճշգրտել ու վերանայել հարկաբյուջետային քաղաքականության ավանդական գործիքակազմերը ու դրանք ուղղել ներառական աճի խթանմանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերոնշյալ հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրության, այդ ոլորտում առկա հիմնական կապերի ու ազդեցությունների բնույթի բացահայտման, ինչպես նաև դրանց հետ կապված արդյունավետ գիտագործնական լուծումներ և հարկաբյուջետային քաղաքականության բարելավման առաջարկությունների մշակման անհրաժեշտությամբ: Թեմայի արդիականությունը բխում է նաև դրան առնչվող ինչպես արդիական տեսամեթոդական, այնպես էլ գիտագործնական մշակումների իրականացման անհրաժեշտությամբ:

Հեղազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի բնույթի ու դրա ներառականությունն ապահովող հիմնական հարկաբյուջետային գործիքակազմերի, մասնավորապես, հարկային և ծախսային քաղաքականության ձևավորված մեխանիզմների ուսումնասիրության հիման վրա առկա հիմնախնդիրների բացահայտումը և իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության գործիքակազմի ու մեխանիզմների բարելավման վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Հեղազոտության շրջանակներում լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել տնտեսական աճի ներառականության վերաբերյալ առկա հայեցակարգերի էվոլյուցիան, հետազոտել տնտեսական աճի ներառականության և տնտեսությանը հարկաբյուջետային գործիքներով միջամտության տեսամեթոդաբանական մոտեցումները:
- Ուսումնասիրել տնտեսական աճի ներառականությունը պայմանավորող մակրոտնտեսական հիմնարար գործոնների բնույթը և փոխազդեցությունները Հայաստանի Հանրապետությունում:
- Հետազոտության շրջանակներում գնահատել տնտեսության օպտիմալ հարկային բեռը ներառական տնտեսական աճի ապահովման տեսանկյունից:
- Տնտեսական աճի ներառականության խթանման տեսակետից վերլուծել և գնահատել ըստ հարկատեսակների կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները անհավասարության տեղաշարժերի համատեքստում, առաձնացնել դրանց քանակական պարամետրերը և որակական կողմերը:
- Հետազոտել պետական ծախսերի հիմնական կառուցվածքային տարրերի ազդեցությունները տնտեսական աճի ներառականության տեսանկյունից, բացահայտել և պարզաբանել, թե ըստ պետական բյուջեի ծախսային ուղղությունների՝ որ համադրությունն է ապահովում տնտեսական աճի ներառականության բարձր մակարդակը:
- Ուսումնասիրել այսպես կոչված «միջին եկամտի ծուղակի» հիմնախնդրի դրսևորումները տնտեսական աճի և հարկաբյուջետային քաղաքականության ներառականության դիտանկյունից:
- Վերլուծել ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության բնույթն ու առանձնահատկությունները եկամուտների արդար և համաչափ վերաբաշխման, տնտեսական աճի ներառականության խթանման տեսակետից:
- Հետազոտել առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրման ազդեցությունները ՀՀ բնակչության եկամուտների ներառական բաշխման ու անհավասարության հաղթահարման համատեքստում:
- Ուսումնասիրել ֆիսկալ ապակենտրոնացման դերը հարկաբյուջետային ներառականության համատեքստում, բացահայտել այդ բնագավառում նոր մեխանիզմների մշակման և ներդրման հնարավորությունները:
- Հետազոտել ավելացված արժեքի հարկի հետվերադարձի մեխանիզմի ներդրման հնարավորությունները պետական բյուջեի եկամուտների և անհավասարության մեղմման վրա ազդեցությունների տեսանկյունից:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան ՀՀ տնտեսական աճի ներառականությունը պայմանավորող գործոնների և պայմանների համախմբությունն է, մասնավորապես՝ հարկաբյուջետային քաղաքականության գործիքների ու մեխանիզմների ազդեցությունները: Հետազոտության օբյեկտը՝ ներառական տնտեսական աճի ապահովմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության մոդելներն ու մեխանիզմները:

Ապենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական

հիմքերը: Սույն հետազոտության շրջանակներում որպես հիմնական մեթոդներ կիրառվել են համեմատական ուսումնասիրության և համադրման, համակարգային վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի, պատմական և տրամաբանական մեթոդները, վիճակագրական, մաթեմատիկական հետազոտության տարբեր գործիքակազմերը: Հետազոտության մեջ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունների գնահատման նպատակով օգտագործվել են էկոնոմետրիկ մոդելավորման ու վերլուծության համապատասխան գործիքներ և մեթոդներ: Մասնավորապես, տվյալների մշակման և հետազոտության համար կիրառվել են ռեգրեսիոն վերլուծության, VAR, պանելային և այլ տիպի մոդելներ:

Հետազոտության համար որպես տեղեկատվական աղբյուր են ծառայել ՀՀ Ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի, այլ պետական գերատեսչությունների տվյալների բազաները, միջազգային կազմակերպությունների տվյալների շտեմարանները, հայաստանյան և միջազգային տարբեր ընկերությունների վերաբերյալ հաշվետվությունները, տվյալ թեմայով ազգային և օտարերկրյա հետազոտողների հրապարակումները, ուսումնասիրությունները և վերլուծությունները:

Հեղազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:

Ատենախոսության հիմնական արդյունքները ունեն տեսական և կիրառական նշանակություն, որոնց նորույթները հանգում են հետևյալին.

- Վեկտորական-ավտոռեգրեսիոն մոդելավորման (VAR) հիման վրա բացահայտվել են ՀՀ պայմաններում տնտեսական աճի, արտադրողականության, զբաղվածության և ներդրումների փոխազդեցությունների երկարաժամկետ միտումները: Ըստ այդմ՝ արտադրողականության ազդեցությունը տնտեսական աճի վրա համեմատաբար ավելի մեծ է ներդրումների ազդեցությունից և համադրելի՝ զբաղվածության ազդեցություններին:

- Հարկաբյուջետային ներառականությունը պայմանավորող մակրոհիմնարարների պանելային-ռեգրեսիոն վերլուծության արդյունքներով հաշվարկվել է հարկային բեռի օպտիմալ մակարդակը և հիմնավորվել, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում ՀՀ տնտեսության մեջ հարկային բեռի փաստացի մակարդակը շարունակաբար բարձր է եղել դրա գնահատված օպտիմալ մակարդակից, և ՀՀ տնտեսական գործընթացների վրա պետական բյուջեի հարկային ազդակը երկարաժամկետում գերազանցապես կրել է զսպող ազդեցություն, ինչը փոխհատուցվել է խթանող ծախսային քաղաքականությամբ:

- Մշակվել է հարկային բեռի օպտիմալ մակարդակի շարժընթացի բազային սցենար և քաղաքականության սիմուլյացիաների արդյունքում առաջարկվել է ընտրված մեթոդաբանությամբ ձևավորված սիմուլյացիոն սցենար, որի իրականացումը հնարավորություն կտա միջնաժամկետում հարկային բեռի օպտիմալ մակարդակը հասցնել ՀՀ կառավարության կողմից դիտարկվող թիրախային ցուցանիշին՝ հիմնվելով ընտրված մակրոտնտեսական հիմնարարների և

ներառականությունը բնութագրող ցուցանիշների շարժընթացի կանխատեսված համադրության վրա:

- Պետական բյուջեի եկամտային մասը ձևավորող հիմնական հարկատեսակների և տնտեսական աճի ներառականությունը պայմանավորող հիմնական գործոնների փոխադարձ կապերի վերլուծության համատեքստում մշակվել է սիմուլյացիոն գործիք, որով գնահատվել է եկամտային հարկի պրոգնոսիզ կամակարգից համահարթ համակարգին անցման ազդեցությունները եկամուտների համաչափ բաշխման տեսանկյունից՝ հիմնավորելով այն դրույթը, ըստ որի՝ ՀՀ-ում 2020-2023թթ. եկամտային հարկի համահարթ համակարգին անցումը խորացրել է եկամտային անհավասարությունը:

- VAR մոդելավորմամբ գնահատման արդյունքում, հաշվի առնելով շահութահարկի նշանակալի բացասական ազդեցությունները ներդրումային ակտիվության վրա, առաջարկվել է հարկային օրենսդրական մեխանիզմ, մասնավորապես՝ վերաներդրվող եկամուտը ձեռնարկատիրական ծախս ճանաչելու և շահութահարկի բազայից նվազեցնելու հնարավորություն, ինչը թույլ կտա որոշակիորեն մեղմել հարկային լծակի բացասական ազդեցությունը ներդրումային նախաձեռնությունների պարագայում:

- Հիմք ունենալով «միջին եկամտի ծուղակի» վարկածը՝ պանելային մոդելների հիման վրա գնահատվել է ՀՀ-ին համադրելի «միջին-բարձր» եկամտային խմբում ընդգրկված երկրներում մարդկային զարգացման, ինչպես նաև անհավասարությամբ ճշգրտված մարդկային զարգացման ինդեքսների վրա պետական կրթական և առողջապահական ծախսերի ազդեցությունները և առաջարկվել են ՀՀ-ում ներառամետ ծախսային քաղաքականության նոր մոտեցումներ, որոնք կսահմանափակեն և կնվազեցնեն անհավասարությամբ պայմանավորված մարդկային զարգացման ինդեքսի կորուստները:

- Մշակված սիմուլյացիոն գործիքով իրականացված սցենարային վերլուծության հիման վրա՝ գնահատվել է պետական բյուջեի վրա անկանխիկ գործառնություններից որոշակի մասնաբաժնով ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) հետվերադարձի մեխանիզմի կիրառման ֆիսկալ ազդեցությունները, մասնավորապես՝ հաշվարկվել և առաջարկվել են ԱԱՀ հետվերադարձի որոշակի սահմանաչափեր և պարամետրեր, որոնց կիրառումը հնարավորություն կտա ապահովել դրական զուտ ֆիսկալ ազդեցությունները:

Արենախոսության արդյունքների գլխական ու կիրառական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների, որակական և քանակական վերլուծությունների արդյունքները, արված առաջարկությունները և եզրակացությունները կարող են օգտագործվել հարկաբյուջետային քաղաքականության պլանավորման, բյուջետային համակարգի զարգացման գերակայությունների որոշման և այդ ոլորտում անհրաժեշտ իրավօրենսդրական փոփոխությունների իրականացման համար:

Ստացված արդյունքները կարող են օգտագործվել հարկաբյուջետային քաղաքականության մշակման գործընթացների լավարկման և արդյունավետության բարձրացման աշխատանքներում: Արդյունքների որոշ մասը կարող է օգտագործվել

մակրոտնտեսագիտության դասընթացներ ներառող կրթական ծրագրերի մշակման և դասավանդման ընթացքում:

Հեղափոխության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՊՏՀ Կիրառական տնտեսագիտության ամբիոնի նիստերի ընթացքում, ինչպես նաև զեկուցվել են մի շարք տեղական և միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության հիմնական արդյունքները ներկայացվել են ՀՀ Ֆինանսների նախարարություն, և դրանց մի մասը դիտարկվել են օրենսդրական և նորամատիվային փաստաթղթերի նախագծերի մշակման ու ոլորտին վերաբերող որոշումների ընդունման ընթացքում:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորությունները ամփոփված են հեղինակի կողմից հրապարակված 12 գիտական հոդվածներում, որոնցից 2-ը ներառված են SCOPUS գիտատեղեկատվական շտեմարանում:

Արենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատության ընդհանուր ծավալը 193 էջ է՝ առանց հավելվածների: Ատենախոսությունը պարունակում է 59 գծապատկեր, 9 աղյուսակ, 142 անուն գրականության ցանկ, 17 համացանցային կայք և 18 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության նպատակը և խնդիրները, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են ատենախոսության գիտական նորույթը, գործնական նշանակությունը և արդյունքների կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության **առաջին՝ «Ներառական տնտեսական աճի եվ հարկաբյուջետային քաղաքականության փոխհարաբերությունների տեսամեթոդաբանական հիմնախնդիրները»** գլխում ուսումնասիրվել են տնտեսական աճի վերաբերյալ տեսությունների և վարկածների էվոլյուցիան, քննարկվել են ներառական տնտեսական աճի չափողականության ու գնահատման հիմնական մոտեցումները և պարադիգմալ ուղղությունները: Այս գլխում վերլուծվել և քննարկվել են նաև հարկաբյուջետային համակարգի ներառականության հիմնական մոտեցումներն ու հայեցակարգերը:

Ամփոփելով և համադրելով տնտեսական աճի ներառականության վերաբերյալ տարաբնույթ մոտեցումներն ու ձևակերպումները՝ հեղինակի կողմից տրվել է տնտեսական աճի վերաբերյալ առավել արդիական ու բովանդակային հետևյալ սահմանումը. *ներառական տնտեսական աճը կայուն զարգացման և սերունդների համագործակցության վրա հիմնված հասարակական արդյունքի այնպիսի դիվերսիֆիկացված աճն է, որը խառնված է հասարակության բոլոր շերտերի ու խավերի համար արժանապատիվ եկամուտներ ենթադրող աշխատանքային հնարավորությունների ապահովման ու դրանց արդյունավետ իրացման, կրթության*

և առողջապահական ծառայություններից օգտվելու հավասար կարելիությունների, ռեսուրսների և տեխնոլոգիաների մատչելիության և արդար կառավարման վրա, ինչպես նաև թույլ է տալիս այդ աճի արդյունքները արդարացի բաշխել ու հասանելի դարձնել ինչպես երկրի բոլոր տարածաշրջաններին, այնպես էլ հանրության բոլոր շերտերին:


Հեղինակը տնտեսական աճի ներառականության համատեքստում քննարկել է այսպես կոչված «միջին եկամտի ծուղակի» վերաբերյալ տնտեսագիտական գրականության մեջ առկա բանավեճը և քննարկումների արդյունքները համադրելով՝ հանգել է տնտեսական աճի ու զարգացման նոր մոտեցումների մշակման անհրաժեշտությանը՝ պնդելով, որ անհրաժեշտ է անցում կատարել տնտեսական աճի ներառական պարադիգմին, ինչը ենթադրում է ամեն գնով տնտեսական աճի քանակական խթանման հետ մեկտեղ, գործողության մեջ դնել եկամուտների վերաբաշխման ու ռեսուրսների խնայողական օգտագործման համակողմանիորեն հիմնավորված նոր մեխանիզմներ, որոնք թույլ կտան հաղթահարել «միջին եկամտի ծուղակը»:

Քննարկելով պետության չափերի, հարկաբյուջետային քաղաքականության և տնտեսական աճի փոխհարաբերությունների վերաբերյալ մոտեցումների էվոլյուցիան և տնտեսական քաղաքականության մեջ դրանց տարաբնույթ անդրադարձները՝ հեղինակը եզրակացրել է, որ այս բնագավառում գոյություն չունեն պատրաստի մոդելներ և դեղատոմսեր, որոնք կիրառելի կլինեն բոլոր երկրների և տարածաշրջանների համար: Թերևս առավել ընդունելի է համարվել այն պնդումը, ըստ որի՝ պետության չափերը և տնտեսական աճը երկկողմանի շարժով պատճառահետևանքային փոխներգործող փոփոխականներ են, որոնց դոմինանտությունը որոշվում է տվյալ երկրի կոնկրետ պատմական պայմաններով, մակրոտնտեսական քաղաքականության ոլորտում ձևավորված ավանդույթներով, ինչպես նաև ժամանակային այն հորիզոնով, որում դիտարկվում և փոխներգործում են այդ փոփոխականները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ներառական տնտեսական աճի վրա ՀՀ հարկաբյուջետային համակարգի բաղադրիչների ազդեցությունների վերլուծությունը և գնահատումը»** գլխում քննարկվել են ներառական տնտեսական աճի մակրոտնտեսական հիմնարարների՝ զբաղվածության, ներդրումների և արտադրողականության երկարաժամկետ (2006-2024թթ) փոխազդեցությունները, որոնք գնահատվել են վեկտոր-ավտոռեգրեսիոն (VAR) մոդելավորման գործիքի միջոցով: Ամփոփելով սույն վերլուծության արդյունքները՝ հեղինակը հիմնավորել է այն պնդումը, ըստ որի՝ արտադրողականության ազդեցությունը տնտեսական աճի վրա համեմատաբար ավելի ուժեղ է ներդրումների ազդեցությունից և համադրելի՝ զբաղվածության ազդեցություններին: Կատարված վերլուծությունից պարզվել է, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ տնտեսությունը պահպանել է իր իրական տնտեսական աճի պոտենցիալը, ընդ որում՝ աճի թերեւոր եղել է վերընթաց (4.5-5% միջակայքում), այնինչ աշխատանքի արտադրողականության կորագիծը եղել է վարընթաց՝ պայմանավորված տնտեսության կառուցվածքի որակական

վատթարացմամբ ու ցածր ավելացված արժեք ունեցող ճյուղերի մասաբաժնի ավելացմամբ:

Աշխատանքի այս հատվածում ուսումնասիրվել են նաև տնտեսական աճի վրա տնտեսության հարկային բեռի ազդեցության շարժի միտումները, այդ տեսանկյունից կատարվել են համադրումներ ՀՀ-ին համադրելի՝ «միջին-բարձր» եկամտային խմբում գտնվող երկրների հետ: Վերլուծությունից պարզվել է, որ ՀՀ-ում հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավման պատմական միջին տեմպն էականորեն գերազանցում է համադրելի երկրների մեդիանական՝ միջին տարեկան 0.1 %-ային կետով համանուն ցուցանիշի բարելավման մակարդակը: Սակայն, զուգահեռաբար պարզվել է նաև, որ ՀՀ-ում հարկային քաղաքականությունն էականորեն զսպող ազդեցություն է ունեցել տնտեսական զարգացումների վրա: Ասվածը փաստում է դիտարկվող ժամանակահատվածում պետական բյուջեի հարկային ազդակի ուսումնասիրությունը (տե՛ս Գծապատկեր 1):




Գծապատկեր 1. ՀՀ Հարկային ազդակների (% ՀՆԱ-ում), ՀՆԱ-ի և ՀՆԱ թրեքնդի շարժընթացը 2005-2024թթ.¹

Հարկային ազդակների վերոնշյալ վարքագիծը բացատրվում է նրանով, որ ՀՀ-ում հաստատված զսպող հարկաբյուջետային քաղաքականությունը շատ դեպքերում թելադրված է հարկահպատակության ոլորտի մի շարք խնդիրներով, որոնցից առավել էականը ստվերայնության զգալի ծավալների պատճառով հարկային բեռի անհամաչափ ու անարդարացի բաշխումն է բարեխիղճ ու անբարեխիղճ հարկատուների միջև: Այս հանգամանքը, ըստ ատենախոսի, թելադրում է հարկային բարեփոխումների հետագա օրակարգը, ինչը ենթադրում է հարկային

¹ Կազմվել է հեղինակի կողմից: Աղբյուրները՝ ՀՀ Վիճակագրական կոմիտեի և ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների քաղանք: <https://armstat.am/am/?nid=82>, https://minfin.am/hy/page/_hy_chart/ Հարկային և ծախսային ազդակների հաշվարկի հիմքում այն ենթադրությունն է, որ տնտեսությունից հավաքագրված հարկերի փոփոխությունը համահարթ հարկման պարագայում պետք է համընկնի ՀՆԱ անվանական աճին (զուգահեռաբար դիտարկվել են նաև իրական և պոտենցիալ աճի սցենարները), այսինքն՝ որքան հարկ կհավաքագրվեր կամ ծախս կկատարվեր, եթե հարկաբյուջետային քաղաքականության փոփոխությունը ամբողջությամբ պայմանավորվեր ՀՆԱ աճով և տնտեսության իրական հատվածի զարգացումներով: Ըստ այդմ, t-1 ժամանակահատվածի գններացված հարկային եկամուտների վրա կիրառելով t ժամանակահատվածում ՀՆԱ աճի տեմպը և դիտարկելով հարկային եկամուտների փաստացի և գնահատված փոփոխությունների տարբերությունը, կստանանք հարկային ազդակը երեք սցենարների պարագայում:

վարչարարության էական բարելավումներ և հարկադրույքների որոշակի վերանայումներ՝ դրանց իջեցման ուղղությամբ: Ձուգահեռաբար անդրադարձ է կատարվել նաև ՀՀ-ում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության մյուս՝ ծախսային ազդակի ներգործությունների դինամիկային: Գծապատկեր 2-ից կարելի է համոզվել, որ *հարկային ազդակի զսպող ազդեցությունները տարբեր տարիներին չեզոքացվել են խթանող ծախսային քաղաքականության ազդեցությամբ*: Այնուամենայնիվ, որոշ տարիների՝ մինչև գնաժամային 2007-2008թթ., ինչպես նաև 2009 թ.-ին, կարելի է նկատել ծախսային քաղաքականության դրսևորած ակնհայտ պրոցիկլային բնույթը:



Գծապատկեր 2. ՀՀ Պետական բյուջեի ծախսային ազդակների (% ՀՆԱ-ում), ՀՆԱ-ի և ՀՆԱ թրենդի շարժերը 2005-2024թթ.²

Հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում է տալիս ընդհանուր հարկաբյուջետային ազդակի ուսումնասիրությունը, որն իրենից ներկայացնում է հարկային և ծախսային ազդակների համակցված ազդեցությունը: Վերոնշյալի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում ճգնաժամային իրավիճակներում քաղաքականության հատկապես հակացիկլային բնույթը:

Ատենախոսության այս հատվածում հեղինակը էկոնոմետրիկ-տնտեսաչափական VAR մոդելների միջոցով իրականացրել է ներառական տնտեսական աճի համատեքստում ՀՀ-ում գործող հիմնական հարկատեսակների

² Կազմվել է հեղինակի կողմից: Աղբյուրները՝ ՀՀ Վիճակագրական կոմիտեի և ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների բազաներ: Ծախսային ազդակի հաշվարկում ընդհանուր բյուջետային ծախսերից գտվել են պաշտպանական կապիտալ ծախսերը, այն տրամաբանությամբ, որ սույն ծախսերը մեծամասամբ ազդեցություն չեն ունենում ամբողջական պահանջարկի վրա՝ հիմնականում ներառելով գենդ-գինամթերքի գնումները, և կարող են խեղաթյուրող ազդեցություններ ունենալ հարկաբյուջետային ազդակի հստակ քանակական գնահատականի հաշվարկում:

<https://armstat.am/am/?nid=82>, https://minfin.am/hy/page/ by_chart/

(եկամտային հարկ, շահութահարկ, ավելացված արժեքի հարկ) ազդեցությունների գնահատում: Մոդելի ընդհանուր տեսքը հետևյալն է.

$$Y_t = \mu + \sum_{i=0}^p \Phi_i * Y_{t-1} + X_t \Gamma + \varepsilon_t$$

Որտեղ՝

Y_t –ն էնդոգեն փոփոխականների վեկտորն է ժամանակի t պահին $t = 2006Q1: 2024Q4$,
 μ - հաստատունների վեկտորն է,

Φ_i –էնդոգեն փոփոխականի լագավորված փոփոխականների գործակիցների մատրիցն է,

X_t – էկզոգեն փոփոխականների մատրիցն է ժամանակի t պահին $t = 2006Q1: 2024Q4$,
 Γ - էկզոգեն փոփոխականների գործակիցների մատրիցն է,

ε_t –մոդելի պատահական սխալն է ժամանակի t պահին $t = 2006Q1: 2024Q4$:

Eviews 12 էկոնոմետրիկ ծրագրային փաթեթի միջոցով գնահատված **առաջին VAR մոդելի** իմպուլս-արձագանքման ֆունկցիաների գնահատման արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում (տե՛ս Աղյուսակ 1).

Աղյուսակ 1.

Եկամտային հարկի, տնտեսական աճի, զբաղվածության, արտադրողականության փոխազդեցությունները նկարագրող VAR մոդելի ամփոփ արդյունքները

	Առավելագույն ազդեցություն (%-ային կետ)	Առավելագույն ազդեցության դրսևորման ժամանակահատված (եռամսյակ)	Կուտակային Ազդեցություն (%-ային կետ)	Նախաշոկային իրավիճակին վերականգնման ժամանակահատված (եռամսյակ)
Տնտեսական աճ	-0.2	3	-0.6	9
Արտադրողականություն	-0.13	3	-0.17	6
Զբաղվածություն	-0.1	4	-0.7	15
R^2	0.75			
$R^2 \text{ adjusted}$	0.56			

Առաջին **VAR** մոդելի իմպուլս-արձագանքման ֆունկցիաների գնահատման արդյունքները հետևյալն են.

- ✓ 1 տոկոսային կետով եկամտային հարկի աճը հանգեցնում է առավելագույնը 0.2 տոկոսային կետով նվազման 3 եռամսյակ անց ,և տնտեսական աճի նախաշոկային մակարդակը վերականգնվում է 9 եռամսյակ անց՝ տվյալ ժամանակահատվածում հանգեցնելով կուտակային 0.6 տոկոսային կետ բացասական ազդեցության:
- ✓ Զուգահեռաբար, եթե դիտարկենք եկամտային հարկի ազդեցությունները արտադրողականության և զբաղվածության վրա, ապա կարելի է նկատել, որ այս պարագայում ևս ազդեցությունները մեծ մասամբ բացասական են:

Eviews 12 էկոնոմետրիկ ծրագրային փաթեթի միջոցով գնահատված **երկրորդ VAR մոդելի** գնահատման արդյունքները ամփոփ ներկայացված են ստորև բերված աղյուսակում (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Շահութահարկի, տնտեսական աճի և ներդրումների փոխազդեցությունները նկարագրող VAR մոդելի ամփոփ արդյունքները

	Առավելագույն ազդեցություն (%-ային կետ)	Առավելագույն ազդեցության ն դրսևորման ժամանակահատված (եռամսյակ)	Կուտակային ազդեցություն (%-ային կետ)	Նախաշոկային իրավիճակին վերականգնման ժամանակահատված (եռամսյակ)
Տնտեսական աճ	-0.03	4	-0.1	5
Հիմնական կապիտալի համախառն կուտակում	-0.1	2	-0.5	16
R^2	0.75			
R^2 adjusted	0.64			

Երկրորդ VAR մոդելի գնահատման արդյունքները հետևյալն են.

- ✓ 1 տոկոսային կետով շահութահարկի աճը հանգեցնում է առավելագույնը 0.03 տոկոսային կետով նվազման 4 եռամսյակ անց, և տնտեսական աճի նախաշոկային մակարդակը վերականգնվում է 5 եռամսյակ անց՝ տվյալ ժամանակահատվածում հանգեցնելով կուտակային 0.1 տոկոսային կետ բացասական ազդեցության:
- ✓ Հետազոտության արդյունքները փաստում են, որ 1 տոկոսային կետով շահութահարկի աճը հանգեցնում է առավելագույնը 0.1 տոկոսային կետով նվազման 2 եռամսյակ անց, և հիմնական կապիտալի համախառն կուտակման նախաշոկային մակարդակը վերականգնվում է 16 եռամսյակ անց՝ տվյալ ժամանակահատվածում հանգեցնելով կուտակային 0.5 տոկոսային կետ բացասական ազդեցության:

View 12 էկոնոմետրիկ ծրագրային փաթեթի միջոցով գնահատված երրորդ VAR մոդելի գնահատման արդյունքները ամփոփ ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3.

ԱԱՀ, տնտեսական աճի, ներմուծման և գնաճի փոխազդեցությունները նկարագրող VAR մոդելի ամփոփ արդյունքները


	Առավելագույն ազդեցություն (%-ային կետ)		Առավելագույն ազդեցության դրսևորման ժամանակահատված (եռամսյակ)		Կուտակային ազդեցություն (%-ային կետ)	Նախաշոկային իրավիճակին վերականգնման ժամանակահատված (եռամսյակ)
	Դրական	Բացասական	Դրական	Բացասական		
Տնտեսական աճ	0.084	-0.096	4	8	-0.14	9
Ներմուծում	0.24	-0.16	3	7	0.06	6
Գնաճ		0.1		4	0.3	8
R^2		0.71				
R^2 adjusted		0.61				

Երրորդ **VAR մոդելի** գնահատման արդյունքները այսպիսին են.

- ✓ Ավելացված արժեքի հարկի աճի պարագայում իրավիճակը մի փոքր այլ է, քանի որ ԱԱՀ-ն համարվում է սպառման հարկ և հիմնականում գանձվում է վերջնական սպառման ապրանքների գնից: Մասնավորապես՝ 1 տոկոսային կետով ԱԱՀ աճը ի սկզբանե հանգեցնում է առավելագույնը 0.084 տոկոսային կետով դրական ազդեցության, այնուհետև ազդեցության ուղղությունը փոխվում է և կազմում է 0.096 տոկոսային կետով անկում 8 եռամսյակ անց, իսկ տնտեսական աճի նախաշոկային մակարդակը վերականգնվում է 11 եռամսյակ անց՝ տվյալ ժամանակահատվածում հանգեցնելով կուտակային 0.14 տոկոսային կետ բացասական ազդեցության:

Աշխատանքում նմա ուսումնասիրվել են եկամտային հարկի ազդեցությունները անհավասարության և եկամուտների բաշխման դինամիկայի համատեքստում: Հաշվարկների համար հիմք են ընդունվել ՀՀ ՊԵԿ տվյալների բազայում ընդգրկված 2019-2023թթ.-ի ավելի քան 800.000 եկամտային հարկ վճարողների վերաբերյալ հարկային տվյալները, որոնք տարեկան կտրվածքով բերվել են ամսական տեսքի, այնուհետև ստորատիֆիկացվել են ըստ 10 դեցիլային խմբերի՝ հիմնվելով նախքան հարկումը յուրաքանչյուր ֆիզիկական անձի համախառն եկամտի մեծության վրա: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր դեցիլային խմբում ընդգրկված հարկատուի համար հաշվարկվել են միջին համախառն եկամուտը նախքան հարկումը, որի հիման վրա էլ հաշվարկվել է տվյալ ժամանակահատվածում Ջիննի գործակցի դինամիկան:

Եկամուտների անհավասարության գրաֆիկական պատկերման նպատակով կառուցվել են Լորենցի կորեր՝ նախքան հարկումը, համահարթ հարկումից հետո և պրոգրեսիվ հարկումից հետո (տե՛ս Գծապատկեր 3): Գծապատկերից ակնհայտ է, որ միայն պրոգրեսիվ հարկման համակարգն է որոշակի դրական ազդեցություն ունենում եկամուտների անհավասարության մեղմման տեսանկյունից, իսկ ահա համահարթ հարկման ազդեցությունը չնչին՝ գրեթե 0-ական է:



Գծապատկեր 3. ՀՀ տնտեսության պայմաններում Լորենցի կորերը նախքան հարկումը և հարկումից հետո 2023թ.-ին³

Վերոբերյալ հետազոտության արդյունքները փաստում են, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում ընդհանուր առմամբ անհավասարության մակարդակը ՀՀ-ում որոշ չափով նվազել է: Այդուհանդերձ, կատարված վերլուծության հետևություններից մեկն այն է, որ 2020 թվականից եկամտային հարկի պրոգրեսիվ համակարգից անցումը համահարթ համակարգի ոչ միայն չի լուծել անհավասարության էական կրճատման խնդիրը, այլև էականորեն նվազեցրել է ֆիսկալ քաղաքականության վերաբաշխողական ֆունկցիայի արդյունավետությունը: Ենթելով դրանից՝ առաջարկվել է ոչ միայն վերստին անցում կատարել պրոգրեսիվ հարկման համակարգի, այլ նաև ավելի բարձր հարկային դրույքաչափեր կիրառել վերին եկամտային խմբերում ընդգրկված հարկատուների պարագայում, ի համեմատ նախկին պրոգրեսիվ համակարգի դրույքաչափերի սանդղակի, իսկ ստորին եկամտային խմբերի համար սահմանել նվազագույն սպառողական զամբյուղի չափով չհարկվող շեմ:

Ատենախոսության երրորդ՝ **«Տնտեսական աճի ներառականությանը միջոցառումները հարկաբյուջեային քաղաքականության կադրելագործման ուղիներն ու հնարավորությունները ՀՀ-ում»** գլխում անդրադարձ է արվել հարկային բեռի օպտիմալ մակարդակի հաշվարկման մեխանիզմին, գնահատվել են պետության ծախսային քաղաքականության ազդեցությունները ներառական տնտեսական աճի ապահովման համատեքստում «միջին եկամտի ծուղակի» հաղթահարման հնարավորություններին: Սույն հետազոտության շրջանակում ընտրվել է պանելային մոդելավորման և ռեգրեսիոն վերլուծության միջոցով հարկեր/ՀՆԱ օպտիմալ մակարդակի գնահատման մեթոդը: Վերոնշյալի համար հիմք են ծառայել Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից 193 երկրներին վերաբերող 2002-2022թթ.-ի ժամանակահատվածի տարեկան տվյալների բազաները: Հիմնվելով տվյալների սույն բազայի վրա՝ գնահատվել է պանելային մոդելներին բնորոշ հետևյալ հատուկացմամբ էկոնոմետրիկ մոդելը.

$$Y_{i,t} = \alpha + \sum \beta_k x_{i,t} + \delta_1 * Country_{low-inc} + \delta_2 * Country_{emerging} + \delta_3 * Country_{fuel-exporter} + \epsilon_{i,t},$$

որտեղ՝

$Y_{i,t}$ – Կախյալ փոփոխականն է՝ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը պանելային տվյալների բազայում ժամանակի t պահին i -երրորդ երկրի պարագայում,

$x_{i,t}$ – անկախ փոփոխականների վեկտորն է,

$\sum \beta_k$ – i -երրորդ երկրի պարագայում կախյալ փոփոխականի առաձգականությունը k -երրորդ անկախ փոփոխականի փոփոխությունից,

$\delta_1 * Country_{low-inc}$ – Կեղծ փոփոխական {0,1} և համապատասխանաբար էլաստիկության գործակից, որն ընդունում է 1 արժեք, եթե երկիրը ԱՄՀ դասակարգմամբ ցածր եկամտային (low-income countries) խմբում է,

³ Գնահատումները կատարվել են հեղինակի կողմից՝ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համադրման արդյունքում, <https://www.src.am/am>

$\delta_2 * Country_{emerging}$ - Կեղծ փոփոխական {0,1} և համապատասխանաբար էլաստիկության գործակից, որն ընդունում է 1 արժեք, եթե երկիրը դասվում է զարգացող շուկաներ ունեցող (emerging markets) միջին եկամտային խմբին,


$\delta_3 * Country_{fuel-exporter}$ - Կեղծ փոփոխական և համապատասխանաբար էլաստիկության գործակից, որն ընդունում է 1 արժեք, եթե երկիրը էներգակիր արտահանող է,

α - մոդելի ազատ անդամն է,

ϵ_{it} - մոդելի իդիոսինկրատիկ սխալը:

Սույն վերլուծությունն իրականացվել է՝ հաշվի առնելով տնտեսական աճի ներառականությունը պայմանավորող բազմաբնույթ գործոնների համախումբը: Գնահատման արդյունքում պարզվել է, որ մի շարք մակրոֆունդամենտալներ՝ շնչի հաշվով ՀՆԱ, սպառում, ներդրումներ, զբաղվածություն, զուգահեռաբար՝ ինստիտուցիոնալ գործոններ՝ կարծիքի արտահայտման և հաշվետվողականության ցուցանիշ, կոռուպցիայի կանխարգելում, թվայնացում՝ համացանցի ծածկույթ և այլն, դրականորեն են նպաստում հարկեր/ՀՆԱ ցուցանիշին: Իսկ ահա աղքատության մակարդակը, ոչ հարկունակ և տնտեսության մեջ էական զբաղվածություն ապահովող գյուղատնտեսության ոլորտի կշիռը, ինֆլացիան և խնայողությունների մակարդակը բացասաբար են ազդում հարկեր/ ՀՆԱ ցուցանիշի վրա: Զուգահեռաբար, կեղծ փոփոխականների վերլուծությունը թույլ է տվել փաստել, որ միջին եկամտային խմբի երկրներում հարկային բեռը միջինում շուրջ 5.9 տոկոսային կետով, իսկ ցածր եկամուտ ունեցող երկրներում շուրջ 7 տոկոսային կետով ավելի ցածր է, քան զարգացած երկրներում:

Վերոնշյալ էլաստիկությունների շարժընթացի գնահատումը 193 երկրների ընտրանքի պարագայում հնարավորություն է տվել յուրաքանչյուր երկրի վերաբերմամբ հաշվարկել վերոնշյալ փոփոխականների համախմբից ածանցվող **հարկային բեռի գնահատված օպտիմալ մակարդակը (Fitted values)**: Մասնավորապես՝ ՀՀ-ի պարագայում հարկեր/ՀՆԱ փաստացի և օպտիմալ մակարդակների դինամիկան ներկայացված է ստորև բերված 4-րդ գծապատկերում:



Գծապատկեր 4. ՀՀ հարկային բեռի փաստացի և գնահատված օպտիմալ մակարդակի շարժընթացը 2002-2022թթ.-ին⁴:

Մոդելի գնահատման հիման վրա հարկային բեռի փաստացի և օպտիմալ մակարդակների համադրումից հետևում է, որ դարասկզբին, երբ ՀՀ տնտեսությունը գտնվում էր հետխորհրդային փոխակերպման շրջանում (ընդհուպ մինչև 2005թ) հարկային բեռի փաստացի մակարդակն էականորեն զիջել է բեռի օպտիմալ մակարդակին: Իսկ ահա հետագա տարիներին փաստացի հարկային բեռն էականորեն գերազանցել է օպտիմալ մակարդակը: Համադրելի երկրների հարկային բեռի գնահատված օպտիմալ միջին բեռի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ ՀՀ հարկային բեռը վերջին տասնամյակում միջինում շուրջ 2.9 տոկոսային կետով գերազանցում է սույն մեթոդաբանությամբ գնահատված օպտիմալ հարկային բեռի մակարդակը, ինչպես նաև 2.1 տոկոսային կետով՝ ԱՄՀ դասակարգմամբ զարգացող (համադրելի) շուրջ 81 երկրների միջին մակարդակը:

Կատարված վերլուծության հիման վրա հեղինակը անդրադարձել է նաև ՀՀ Կառավարության կողմից 2021-2026թթ. ծրագրում թիրախավորած հարկեր/ՀՆԱ՝ 25 % մակարդակին⁵ հասնելու հնարավորությանը՝ հաշվի առնելով ներառականության ապահովման պահանջները: Այս համատեքստում դիտարկելով ընտրված գործոնների համախմբի պատմական շարժընթացը և օգտվելով պանելային ռեգրեսիայով գնահատված էլաստիկություններից՝ կանխատեսվել է **հարկեր/ՀՆԱ ցուցանիշի օպտիմալ մակարդակը**: Ըստ վերլուծության՝ սույն ցուցանիշը, հենվելով ընտրված հենասյուների համակցության պատմական աճերի թրենդի վրա, միջնաժամկետ հորիզոնում կարող է բարելավվել տարեկան միջինում 0.5 տոկոսային կետով՝ 2027թ.-ին կազմելով ՀՆԱ հարաբերակցությամբ 23%-ը, ինչը էականորեն ցածր է պաշտոնական քաղաքականության թիրախային մակարդակից (տե՛ս Գծապատկեր 5): Այս համատեքստում, ըստ ատենախոսի, ՀՀ կառավարությունն ունի 2 տարբերակ՝ կա՛մ ընտրել քաղաքականության համար գնահատված օպտիմալ մակարդակը և շարժվել բազային սցենարով, կա՛մ կոմբինավորել և թիրախավորել մակրոտնտեսական ֆունդամենտալների և ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող գործոնների այնպիսի համախումբ, որը հնարավորություն կտա միջնաժամկետ հորիզոնում ապահովել քաղաքականության թիրախին հասնելը:

Վերջինս, ըստ կատարված վերլուծության արդյունքների, հնարավոր է ապահովել առնվազն 2027թ.-ին, եթե պահպանվեն կանխատեսվող

⁴ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ փաստացի հարկեր/ՀՆԱ ցուցանիշի համար իմը ընդունելով Պետական ֆինանսների վերաբերյալ ԱՄՀ տվյալների բազան (ի տարբերություն ՀՀ հարկաբյուջետային վիճակագրության՝ չի ներառում եկամտային հարկի հետվերադարձի ցուցանիշը, որը 2018 և 2019թթ.-ին կազմել է ՀՆԱ հարաբերակցությամբ 0.1%, 2020թ.-ին՝ 0.2%, 2021թ.-ին՝ 0.3, 2022թ.-ին՝ 0.4%, իսկ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը՝ ներառյալ եկամտային հարկի հետվերադարձի ազդեցությունը՝ 2018թ.-ին՝ 21.0%, 2019թ.-ին՝ 22.5%, 2020թ.-ին՝ 22.6%, 2021թ.-ին՝ 23.0% , 2022թ.-ին՝ 23.1%), իսկ օպտիմալ մակարդակը գնահատվել է հեղինակի կողմից վերոնշյալ էկոնոմետրիկ պանելային ռեգրեսիոն մոդելի միջոցով:

2022թ.-ի Հայաստանի փաստացի հարկեր/ՀՆԱ ցուցանիշը մոդելում ներառվել է ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների բազայից՝ համադրելիության ապահովման նպատակով, քանի որ ԱՄՀ տվյալների բազայում 2022թ.-ի ՀՀ սոցիալական վճարներ/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը բացակայում է /<https://minfin.am/hy/page/ hy chart />: Սղորդը՝ <https://www.imf.org/en/Topics/fiscal-policies/world-revenue-longitudinal-database> ,

⁵ «ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր», էջ 95: <https://www.gov.am/files/docs/4586.pdf>

Ժամանակահատվածում ընտրված գործոնների համապատասխան բարելավումների համակցությունը: Գործոնների վերոնշյալ համակցությունը, ատենախոսի կարծիով, պահանջում է քաղաքականության բավականին լայն միջոցառումների գործարկում, որն, ի վերջո, հնարավորություն կտա հասնել ՀՀ Կառավարության սահմանած թիրախին, ինչպես նաև որակապես բարելավել մակրոտնտեսական միջավայրը, ինչից էլ կաճանցվի արդեն ավելի բարձր՝ օպտիմալին մոտ, հարկային բեռի մակարդակը:



Գծապատկեր 5. ՀՀ հարկային բեռի գնահատված օպտիմալ մակարդակի շարժընթացը և կանխատեսումը բազային և սիմուլյացիոն սցենարների պարագայում 2003-2022թթ.-ին ⁶:

Աշխատանքի սույն հատվածի հիմնական մեթոդաբանական ելակետերից է ոչ միայն տնտեսական աճի վրա պետական ծախսային քաղաքականության ազդեցությունների գնահատումը, այլև մարդկային կապիտալի կուտակման, որակական զարգացման, ինչպես նաև եկամուտների համաչափ և արդարացի բաշխման տեսանկյունից այդ քաղաքականության հիմնական ազդեցությունների բացահայտումը: Այս առումով, որպես հետազոտության հիմնական ուղենիշեր ընտրվել են Մարդկային զարգացման ինդեքսը (HDI) և այդ ինդեքսի մոդիֆիկացիան՝ Անհավասարությամբ ճշգրտված մարդկային զարգացման ինդեքսը (IHDI): Վերջինս հաշվարկվում է՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) մեթոդաբանության հիման վրա մշակված Մարդկային զարգացման ինդեքսը ձևափոխելով Աթկինսոնի անհավասարության ինդեքսի հիման վրա: Վերոնշյալ երկու ինդեքսների տարբերությունը ցույց է տալիս անհավասարությամբ պայմանավորված հասարակության կորուստը:

Մարդկային զարգացման ինդեքսի, ինչպես նաև անհավասարությամբ ճշգրտված Մարդկային զարգացման ինդեքսի փոփոխությունները պայմանավորող գործոնների վերլուծության նպատակով սույն հետազոտության շրջանակներում դիտարկվել են հետևյալ հատուկացմամբ երկու պանելային էկոնոմետրիկ մոդելները.

⁶ Օպտիմալ մակարդակը գնահատվել է հեղինակի կողմից վերոնշյալ էկոնոմետրիկ պանելային ռեգրեսիոն մոդելի միջոցով:

$$Y_{i,t} = \alpha_i + \sum \beta_k x_{i,t} + \epsilon_{i,t},$$

որտեղ՝

$Y_{i,t}$ – Կախյալ փոփոխականն է պանելային տվյալների բազայում ժամանակի t պահին i -երրորդ երկրի՝ 1-ին մոդելում մարդկային զարգացման ինդեքսի (HDI), 2-րդ մոդելում՝ անհավասարությամբ ճշգրտված մարդկային զարգացման ինդեքսի (IHDI) մակարդակը,

$x_{i,t}$ – Անկախ փոփոխականների վեկտորն է, որը ներառում է կրթության պետական ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ում և հասարակության ընդհանուր առողջապահական ծախսերում պետական առողջապահական ծախսերի կշիռը, համացանցից օգտվողների կշիռն ընդհանուր բնակչության մեջ և դպրոցահասակ երեխաների շրջանում դպրոց հաճախելիության կշիռը (բոլորը՝ լոգարիթմական արտահայտությամբ), զբաղվածների հարաբերակցությունն ընդհանուր բնակչության թվին, ինչպես նաև երկրի ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող մի շարք գործոններ՝ կոռուպցիայի կանխարգելման համաթիվը, քաղաքական կայունության և ահաբեկչության բացակայության համաթիվը:

Ամփոփելով վերոնշյալ վերլուծությունը՝ արձանագրվել է, որ պետական ծախսային քաղաքականության վերոհիշյալ ուղղություններն ունեն վիճակագրորեն նշանակալի ազդեցություններ և անհավասարությամբ ճշգրտված մարդկային զարգացման ինդեքսի վրա ազդեցության առավել մեծ էլաստիկություն, ինչը փաստում է «միջին-բարձր» եկամտային խմբում ընդգրկված երկրներում տվյալ քաղաքականությունների կարևորությունը անհավասարության հաղթահարման հիմնախնդրի շրջանակում:

Աշխատանքի այս հատվածում ուսումնասիրվել է նաև ՀՀ-ում առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) ներդրման ֆինանսավորման մեխանիզմի հնարավոր ազդեցությունները ներառականության և եկամուտների համաչափ բաշխման տեսանկյունից: Արդյունքում ատենախոսը հանգել է եզրակացության, որ ԱՀԱ ներդրման ներկայիս նախագծի հիմքում ընկած ֆինանսավորման մեխանիզմը, մասնավորապես՝ համահարթ դրույքաչափի կիրառումը կարող է էականորեն խորացնել եկամուտների անհավասար բաշխումը և ավելացնել սոցիալական լարվածությունը: Այս համատեքստում որպես լուծում առաջարկվել է սահմանել ապահովագրավճարի պրոգրեսիվ դրույքաչափ, ինչպես նաև բնակչության սոցիալապես խոցելի ստորին եկամտային դեցիլների համար նախատեսել պետության կողմից ապահովագրավճարի որոշակի փոխհատուցում:

Աշխատանքի երրորդ գլխում քննարկվել է նաև ֆիսկալ ապակենտրոնացման դերը՝ որպես տարածքների ներառական զարգացման գործոն: Այս համատեքստում առաջարկվել են մի շարք մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան բարձրացնել տարածքների ֆինանսական ներառականության մակարդակը: Այդ հատվածում որոշակիորեն ուսումնասիրվել ու լուծումներ են առաջարկվել անկանխիկ գործարքներից ավելացված արժեքի հարկի հետվերադարձի որոշակի մեխանիզմի վերաբերյալ:

Ատենախոսության «**Եզրակացություններ և առաջարկություններ**» բաժնում, հաշվի առնելով ատենախոսության շրջանակներում կատարված

հետազոտությունները, ուսումնասիրություններն ու վերլուծությունները, հանգել ենք հետևյալ **եզրակացություններին**.

1. Համադրելով տնտեսական աճի ներառականության վերաբերյալ տարաբնույթ մոտեցումներն ու ձևակերպումները՝ մեր կարծիքով առավել արդիական ու բովանդակային առումով ավելի նպատակային կարող է լինել հետևյալ սահմանումը. *ներառական տնտեսական աճը կայուն զարգացման և սերունդների համագործակցության վրա հիմնված հասարակական արդյունքի այնպիսի դիվերսիֆիկացված աճն է, որը խարսխված է հասարակության բոլոր շերտերի ու խավերի համար արժանապատիվ եկամուտներ ենթադրող աշխատանքային հնարավորությունների ապահովման ու դրանց արդյունավետ իրացման, կրթության և առողջապահական ծառայություններից օգտվելու հավասար կարելիությունների, ռեսուրսների և տեխնոլոգիաների մատչելիության և արդար կառավարման վրա, ինչպես նաև թույլ է տալիս այդ աճի արդյունքները արդարացի բաշխել ու հասանելի դարձնել ինչպես երկրի բոլոր տարածաշրջաններին, այնպես էլ հանրության բոլոր շերտերին:*

2. Ժամանակակից տնտեսական քաղաքականության գործիքներն ու գործիքակազմերը, մասնավորապես հարկաբյուջետային և սոցիալական քաղաքականությունների մասով, կարգաբերված են ոչ ներառամետ հայեցակարգերի ու գաղափարական հիմնավորումների ներքո: Մինչդեռ ակնհայտ է, որ այդպիսի կարգավորումների արդյունքում իրականացվող քաղաքականությունները հանգեցնում են խտրական կամ բացառական տնտեսական աճի, որի պայմաններում տնտեսական աճի պտուղները բնակչության խմբերի ու խավերի միջև բաշխվում են ծայրահեղ անհավասարաչափ, ու այդ գործընթացներից շահում են առավելապես բնակչության ունևոր խավերը:

3. Հայաստանի Հանրապետության տնտեսության աճի երկարաժամկետ միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակահատվածում տնտեսության մեջ կատարված կառուցվածքային տեղաշարժերը չեն հանգեցրել տնտեսական աճի կառուցվածքում բարձրարտադրողական և ավելացված արժեքի մեծ մասնաբաժին ունեցող ճյուղերի տեսակարար կշռի ավելացմանը, այլ տեղի են ունեցել հակառակ գործընթացներ. աճի կառուցվածքում հիմնական աճի շարժիչ գործոններ են հանդիսացել ավելացված արժեքի ցածր մասաբաժին ունեցող ծառայությունները և առևտուրը: Կատարված վերլուծությունից պարզվել է, որ երկարաժամկետում ՀՀ տնտեսությունը պահպանել է իր իրական տնտեսական աճի պտուենցիալը, ասել է թե՛ աճի թրեմդը եղել է վերընթաց (4.5-5%-ի սահմաններում), այնինչ նույն ժամանակահատվածում աշխատանքի արտադրողականության կորագիծը եղել է վարընթաց՝ պայմանավորված տնտեսության կառուցվածքի որակական վատթարացման ու ցածր ավելացված արժեք ունեցող ճյուղերի մասաբաժնի ավելացմամբ:

4. Մեր ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում երկարաժամկետ հատվածում հարկային բեռի (հարկեր/ՀՆԱ) պաշտոնական

գնահատումները և դրանց հիման վրա կատարված կարճաժամկետ պլանավորումները բավականաչափ հեռու են եղել այն օպտիմալ մակարդակներից, որոնք տնտեսությունից կատարվող փաստացի հարկային մասհանումները պահեին ներառականության և բալանսավորվածության միջակայքում: Ելնելով հարկային բեռի գնահատման համատեքստում մակրոտնտեսական հիմնարարների և ինստիտուցիոնալ միջավայրը նկարագրող շուրջ երկու տասնյակ ցուցանիշների փոխկապակցությունների վերլուծությունից՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության փաստացի մեծությունը, սկսած 1990-ական թվականների ազատական ռեֆորմների շրջանից մինչև 2000-ական թվականների կեսերը, եղել է ցածր այդ ցուցանիշի գնահատված օպտիմալ մակարդակից, իսկ այնուհետև մշտապես՝ մինչև ներկա ժամանակահատվածը, հակառակը՝ բարձր է եղել Հարկեր/ՀՆԱ գնահատված օպտիմալ մակարդակից:

5. Վերջին երկու տասնամյակների ընթացքում տնտեսական քաղաքականության հարկային ազդակը շարունակաբար զսպող ազդեցություն է ունեցել տնտեսական աճի վրա, ինչը որոշակիորեն փոխհատուցվել է խթանող ծախսային քաղաքականությամբ: Ընդ որում, հարկային փաստացի բեռի այդ շեղումը դրսևորվում է ոչ միայն ՀՀ, այլև ՀՀ-ին համադրելի (շնչի հաշվով միջին եկամտի մակարդակ ունեցող) 81 երկրների համար հաշվարկված հարկային բեռի օպտիմալ մակարդակի վերաբերմամբ: Հատկանշական է նաև, որ ՀՀ-ում Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի գնահատված օպտիմալ մակարդակը շոշափելի կերպով բարձր է համադրելի երկրների միջին՝ ինչպես փաստացի, այնպես էլ գնահատված օպտիմալ մակարդակներից:

6. Հետազոտության շրջանակում իրականացված վերլուծությունները փաստում են, որ հարկային համակարգի հիմնական տարրերը ՀՀ-ում՝ ի դեմս երեք խոշոր հարկատեսակների՝ եկամտային հարկի, շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, սերտ փոխկապակցված է ինչպես տնտեսական աճին ինքնին, այնպես էլ տնտեսական աճը բացատրող և աճի որակը բնութագրող ներառականության գործոններին: Այս առումով կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ՀՀ-ում փաստացի հարկային բեռն արդեն իսկ բարձր է օպտիմալ մակարդակից, և քաղաքականության հետագա վերանայումները ներառականությանը միտված հարկային քաղաքականության տեսանկյունից պետք է շրջանակվեն հարկային գործիքների դիզայնի ճշգրտման, այլ ոչ թե զուտ քանակապես հարկային մուտքերի և բեռի ավելացման համատեքստում: Սույն հետազոտության շրջանակներում հաշվարկների և գնահատումների միջոցով առաջարկվել են եկամտային հարկի (անցում պրոգրեսիվ հարկման, չհարկվող շեմի սահմանում), շահութահարկի (հարկման բազայից վերաներդվող եկամտի նվազեցման մեխանիզմ), ինչպես նաև ԱԱՀ (հետվերադարձերի մեխանիզմի կիրառում) պարագայում հարկային քաղաքականության ճշգրտման որոշակի գործիքակազմեր, որոնք հնարավորություն կտան բարձրացնել սույն գործիքների պրոգրեսիվությունը և ներառամետ բնույթը:

7. Ատենախոսության արդյունքները հաստատում են ՀՀ-ում ուղղակի հարկերի քանակական բացասական ազդեցությունները տնտեսական աճի և աճը բնութագրող

ներառականության գործոնների վրա: Եվ այս համատեքստում կարևոր է բալանսավորել պետության տնտեսական քաղաքականության նպատակները, մասնավորապես՝ տնտեսական աճի ապահովման թիրախները համադրել եկամուտների անհամաչափ բաշխման նվազեցմանը միտված քաղաքականության միջոցառումների հետ, քանի որ, մի կողմից՝ անցումը եկամտային հարկի համահարթ դրույքաչափից պրոգրեսիվի կարող է մեղմել եկամուտների անհավասարությունը, մյուս կողմից՝ հաշվի առնել, որ համեմատաբար բարձր հարկային դրույքաչափերը կարող են որոշ չափով զսպել տնտեսական աճի տեմպերը:

8. Հետազոտությունից հետևում է, որ ավելացված արժեքի հարկի հավելյալ մուտքերը հանդիսանում են խթան արտադրողների համար, քանի որ փոքր բաց տնտեսության պարագայում բարձր պահանջարկի պայմաններում արտադրողները տնտեսական ակտիվության հավելյալ խթաններ են ստանում մեծացնելու թողարկման ծավալները: Իսկ ահա հավելյալ հարկազանձումները չեն հանգեցնում արտադրական-ձեռնարկատիրական վարքագծի փոփոխության, քանի որ, ի վերջո, վերջնական սպառողն է հանդիսանում հարկային բեռի հիմնական կրողը: Սակայն, այս երևույթը կարող է շարունակվել մինչև այն պահը, քանի դեռ գնային փոփոխությունները էականորեն չեն ազդել սպառողի վարքագծի վրա և տնտեսական աճի տեսանկյունից շրջման կետի էֆեկտ առաջացրել:

9. Վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում հասարակության տարբեր խմբերի ու շերտերի միջև եկամուտների բաշխման բնագավառում վերջին տասնամյակներին ձևավորված միտումները շարունակվում են պահպանվել: Ընդ որում՝ հետազոտության արդյունքները էականորեն տարբերվում են, երբ համադրվում են ՀՀ ՎԿ հարցումների հիման վրա եկամուտների անհամաչափ բաշխման ցուցիչների հաշվարկները և ՀՀ ՊԵԿ՝ հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական բազայի հիման վրա կատարված հաշվարկների արդյունքները: Սիմուլյացիոն հաշվարկների և կատարված վերլուծության մյուս հետևություններից մեկն էլ այն է, որ 2020 թվականից եկամտային հարկի պրոգրեսիվ համակարգից անցումը համահարթ համակարգի ոչ միայն չի լուծել անհավասարության մեղմման խնդիրը, այլ մի բան էլ խորացրել և էականորեն նվազեցրել է հարկաբյուջետային քաղաքականության վերաբաշխողական ֆունկցիայի արդյունավետությունը:

10. ՀՀ-ում զբաղվածության վրա ազդող ֆինանսական և տնտեսության իրական հատվածի գործոնների փոխազդեցությունների ուսումնասիրությունից հետևում է, որ աշխատանքի հարկերի ծավալները և գանձման դինամիկան զգալիորեն ազդում են աշխատանքի շուկայի բաղադրիչների վարքագծի վրա, ընդ որում՝ այդ ազդեցությունները ցիկլային բնույթ ունեն, որոնք նաև պայմանավորված են ինստիտուցիոնալ գործոններով: Ըստ հետազոտության արդյունքների՝ ՀՀ-ում զբաղվածության կրճատման ուղղությամբ է գործում նաև աշխատանքի արտադրողականության ավելացման գործոնը:

11. Անհավասարությամբ ճշգրտված մարդկային զարգացման ինդեքսի վրա ծախսային քաղաքականության ազդեցության առավել մեծ էլաստիկությունը փաստում է «միջին-բարձր» եկամտային խմբում ընդգրկված երկրներում տվյալ

քաղաքականությունների կարևորությունը անհավասարության հաղթահարման հիմնախնդրի շրջանակում: Չուգահեռաբար՝ այս երևույթը ազդակ է քաղաքականություն մշակողներին, որ կրթության և առողջապահության ոլորտներում պետական ծախսային քաղաքականության ազդեցությունները պետք է դիտարկել ոչ միայն ընդհանուր մարդկային զարգացման, այլ նաև վերաբաշխողական երևույթների համատեքստում, քանի որ ազդեցությունները նշանակալի և քանակապես ակնառու են սույն վերլուծության ինչպես որակական, այնպես էլ քանակական գնահատումների արդյունքում:

12. Տնտեսական աճի ներառականությունն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել եկամուտների վերաբաշխման քաղաքականության սկզբունքային վերանայում առաջին հերթին արդյունավետ հարկային բարեփոխումների և սոցիալական տրանսֆերտների քաղաքականության միջոցով: Այս տեսակետից հարկային քաղաքականության մեջ հիմնական շեշտը պետք է դնել եկամտային հարկի դրույքաչափերի պրոգրեսիվության աճի, անշարժ գույքի և կուտակված ունեցվածքի հարկման դրույքների բարձրացման, ոչ աշխատավարձային եկամուտների հարկման ավելի ճկուն և դիֆերենցված դրույքների կիրառման մեխանիզմների կատարելագործման վրա: Մյուս կողմից՝ հարկային ներառականության առումով կարելի է մտածել սոցիալապես խոցելի և թույլ խավերի տնտեսական նախաձեռնությունների խթանման կամ աշխատանքային գործունեության մեջ ավելի ակտիվ ներգրավման նպատակով եկամտային հարկի արտոնությունների սահմանման կամ այդ կատեգորիայի անձանց աշխատանքի ներգրավման դեպքում կորպորատիվ հարկերի արտոնությունների սահմանման ուղղությամբ հարկային քաղաքականության նոր մոտեցումներ ներդնելու մասին:

13. Վերլուծության ամփոփ արդյունքների դիտարկումը փաստում է, որ սահմանափակ բյուջետային հնարավորությունների պարագայում, ինչպես նաև հարկային ստվերայնության ներկայիս մակարդակի առկայության պայմաններում, ԱԱՀ հետվերադարձի մեխանիզմի ներդրումը կարող է զուտ ֆիսկալ դրական ազդեցություններ ունենալ հարկային ճեղքի 10% և ավել կրճատման սցենարային զարգացումների պարագայում (զուտ ֆիսկալ էֆեկտը զրոյացնող հարկային ճեղքի կրճատումը՝ 5%), իսկ հետվերադարձի դրույքաչափը հարկային ճեղքի կրճատմանը համահունչ կարող է փոփոխվել 3%-ից մինչև 8%: Միևնույն ժամանակ, ստվերայնության կրճատումը և դրա միջոցով հավելյալ հարկային մուտքերի ստացումը կարող են ապագայում հնարավորություններ ստեղծել դեպի վերև ճշգրտել ինչպես հետվերադարձի դրույքաչափը, այնպես էլ առավելագույն սպառման սահմանաչափը, իսկ ահա սպառման առավելագույն սահմանաչափի ամրագրման համար որպես հիմք նվազագույն սպառողական զամբյուղի դիտարկումը հնարավորություն կստեղծի օժանդակել սպառման համեմատաբար նվազ մակարդակ ունեցող սոցիալական խմբերին:

Հիմնվելով առենախոսության շրջանակներում ձեռքբերված արդյունքների վրա՝ աշխատանքում կատարվել են հետևյալ առաջարկությունները.

1. Կատարված վերլուծության արդյունքում մշակվել է հարկային բեռի օպտիմալ մակարդակի շարժընթացի բազային սցենար և քաղաքականության սիմուլյացիաների արդյունքում առաջարկվել է ընտրված մեթոդաբանությամբ ձևավորված սիմուլյացոն սցենար, որի իրականացումը հնարավորություն կտա միջնաժամկետում հարկային բեռի օպտիմալ մակարդակը հասցնել ՀՀ կառավարության կողմից պաշտոնապես դիտարկվող թիրախային ցուցանիշին (Հարկեր/ՀՆԱ՝ 25 տոկոս մակարդակի)՝ հիմնվելով ընտրված մակրոտնտեսական հիմնարարների և ներառականությունը բնութագրող ցուցանիշների շարժընթացի կանխատեսված համադրության վրա:

2. ՀՀ-ում անհավասարության մակարդակն օպտիմալացնելու նպատակով առաջարկվում է ոչ միայն անցում կատարել եկամտային հարկի պրոգրեսիվ հարկման համակարգի, այլ նաև ավելի բարձր հարկային դրույքաչափեր կիրառել վերին եկամտային խմբերում ընդգրկված հարկատուների պարագայում, ի համեմատ նախկին պրոգրեսիվ համակարգի դրույքաչափերի սանդղակի, իսկ ստորին եկամտային խմբերի վրա հնարավոր բացասական ազդեցությունները նվազեցնելու նպատակով սահմանել նվազագույն սպառողական զամբյուղի չափով չհարկվող շեմ:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահութահարկի պարագայում տնտեսական աճին բացասաբար նպաստող հիմնական ուղին հանդիսանում է ներդրումների վրա ազդեցությունը՝ սույն հետազոտության շրջանակում առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված շահութահարկի հարկման բազայից Հարկային օրենսգրքով սահմանված նվազեցվող ձեռնարկատիրական ծախսերի շարքը համալրել կազմակերպության կողմից վերաներդրվող եկամուտը ծախս ճանաչելու և նվազեցնելու դրույթով, ինչը հնարավորություն կտա որոշակիորեն զսպել կապիտալի կուտակման և ներդրումների, հետևապես նաև տնտեսական աճի վրա բացասական ազդեցությունները:

4. Նկատի ունենալով ավելացված արժեքի հարկի՝ հասարակության լայն զանգվածների վրա ունեցած գնային փոխանցումային ուղիներով ազդեցությունների, հարկման լայն բազայի, ինչպես նաև ստվերայնության մակարդակի հանգամանքները, առաջարկվել է կիրառել ԱԱՀ հետվերադարձի մեխանիզմ, ինչը հնարավորություն կտա բազմավեկտոր մոտեցում ցուցաբերել տնտեսական աճի ներառականության և ստվերայնության կրճատման տեսանկյունից, հնարավորություն կստեղծի թիրախավորել սպառման համեմատաբար նվազ մակարդակ ունեցող սոցիալական խմբերին, քանի որ հետվերադարձի առաջարկվող առավելագույն չափը համեմատաբար մեծ տեսակարար կշիռ կունենա սպառման առավել նվազ մակարդակ ունեցող հասարակության խավերի եկամտում:

5. Հաշվի առնելով անհավասարությամբ ճշգրտված մարդկային զարգացման ինդեքսի վրա կրթության և առողջապահության ծախսերի առավել մեծ էլաստիկությունը՝ այդ ոլորտներում հնարավորինս թիրախային պետական ծախսային գործիքակազմերի կիրառումը ապագայում կարող է խիստ հավանական հնարավորություններ ստեղծել «միջին եկամտի ծուղակի» հաղթահարման և «միջին-բարձր» եկամտային խմբում ընդգրկված երկրներում նվազագույնի հասցնել

անհավասարությամբ պայմանավորված մարդկային զարգացման ինդեքսի կորուստը: Նկատի առնելով այն հնգամանքը, որ Առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման մասին օրենքի նախագծով առաջարկվող ֆինանսավորման մեխանիզմի գործադրումը կարող է խորացնել եկամտային անհավասարությունը և սոցիալական լարվածության աճի ռիսկեր է պարունակում, առաջարկվում է ներդնել ապահովագրավճարի պրոգրեսիվ սանդղակ, ինչպես նաև բնակչության ցածր եկամտային խմբերի ապահովագրավճարի փոխհատուցումը կատարել պետության հաշվին:

6. Միջազգային փորձի վերլուծության համատեքստում, հաշվի առնելով Հայաստանում ֆիսկալ ապակենտրոնացման իրողությունները, ինչպես նաև համայնքների ֆինանսական ինքնաբավությունը բարձրացնելու և տարածքային ներառականությունը ապահովելու անհրաժեշտությունը, առաջարկվել են առավել հասցեական և թիրախային գործիքներ, որոնք միտված են զարգացման ծրագրերին: Այս տեսակետից նպատակահարմար է համարվել սուբվենցիաների, դոտացիաների և լրավճարների համար նախատեսված ֆինանսական ռեսուրսները կապակցել համայնքային սուբյեկտների տնտեսական ակտիվությանը և դրանք ուղղել առավելապես ենթակառուցվածքային զարգացման ծրագրերին: Ըստ այդմ՝ սուբվենցիաների որոշակի մասը կարող է փոխարինվել համայնքում գործող կազմակերպությունների եկամտային հարկից, շահութահարկից կատարվող մասհանումներով՝ տարբերակված գործակիցներով՝ ըստ սահմանվող առաջնահերթությունների, ինչը կարող է օգտագործվել միայն կապիտալ բնույթի ծախսերի համար:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական աշխատություններում

1. **Margaryan A.** Structural impacts of the tax system on the economic growth in the Republic of Armenia. «*Messenger of Asue*», N 1(73), 2023. 5-18.
DOI:10.52174/1829-0280_2023.1-5.
2. **Margaryan A.** On the Modern methodological issues of transition to the paradigm of inclusive economic growth «*Alternative*» *Quarterly Academic Journal Economy & Management*, Vol 2, 2023, 131-142. DOI:10.55528/18292828-2023.2-102.
3. **Margaryan A.** Long-term Trends in Household Income and Consumer Spending in the Context of Changes in Inequality in the Republic of Armenia. *Scientific Analytical Journal "Region and the World"*, 2024, 3, 128-136.
DOI: 10.58587/18292437-2024.3-128
4. **Margaryan A.** Macroeconomic impacts of personal income tax in the context of inclusive distribution of income and overcoming inequality, «*Alternative*» *Quarterly Academic Journal Economy & Management*, 2024, 2, 78-91.
DOI: 10.55528/18292828-2024.2-78

5. **Margaryan A.** Interactions of economic growth, productivity, investment and employment in the context of long-term macroeconomic developments.
"Alternative" Quarterly Academic Journal Economy & Management, 2024, 3, 54-60.
 DOI: 10.55528/18292828-2024.3-54.
6. **Margaryan A.** Interactions between income taxation and employment in the context of economic development: the case of Armenia, *«Public policy and administration»*, 2024, 23(4), 524-536. DOI: 10.13165/VPA-24-23-4-7. **(SCOPUS - Q3)**,
7. **Margaryan A.** The mechanism of multifactory assessment of the optimal tax burden in the context of ensuring inclusive economic growth in the Republic of Armenia.
«Messenger of Asue», 2025թ. N1 (79), 23-38. DOI:10.52174/1829-0280_2025.1-23.
8. **Sandoyan E., Margaryan A.** The impacts of government Spending policy on the human development in the context of overcoming the “middle income trap”, *Finance: Theory and practice*. Vol. 29. No 4. 2025. 40-52.
<https://doi.org/10.26794/2587-5671-2025-29-4-2006-03>. **(SCOPUS- Q3)**.
9. **Margaryan A.** Interactions between taxes and economic growth in the context of inclusive economic growth factors, *«Alternative» Quarterly Academic Journal*, January - March, # 1, 2025թ. 81-90. DOI: 10.55528/18292828-2025.1-81.
10. **Մարգարյան Ա.** Ֆիսկալ ապակենտրոնացումը որպես տարածքների ներառական զարգացման գործոն, «регион и мир» научно-аналитический журнал, 2025, 1(56), էջեր՝ 209-215. DOI: 10.58587/18292437-2025.1-209.
11. **Մարգարյան Ա.** «Ավելացված արժեքի հարկի հետվերադարձը որպես ներառականության աճի և անկանխիկ գործարքների արդյունավետության բարձրացման գործոն»«Регион и мир» научно-аналитический журнал, 2025, 2(57) . էջեր՝ 212-219. DOI: 10.58587/18292437-2025.2-212.
12. **Մարգարյան Ա.** «Առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ազդեցությունները ՀՀ բնակչության եկամուտների ներառական բաշխման ու անհավասարության հաղթահարման համատեքստում», «Գիտական Արցախ» պարբերական, 2024, 3, էջեր՝ 205-220.
 DOI: 10.52063/25792652-2024.3.22-205.

ПРОБЛЕМЫ НАЛОГОВО-БЮДЖЕТНОЙ ПОЛИТИКИ ПО ОБЕСПЕЧЕНИЮ
ИНКЛЮЗИВНОГО ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика и управление народным хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 20-го июня 2025 года в 14⁰⁰ на заседании Специализированного совета по экономике 014 Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, ул. Налбандяна 128, г. Ереван, РА.

Р Е З Ю М Е

Диссертация посвящена вопросам фискальной политики, направленной на обеспечение инклюзивного экономического роста в Республике Армения. **Основной целью** исследования является выявление существующих проблем на основе изучения характера экономического роста Республики Армения и основных фискальных и бюджетных инструментов, обеспечивающих его инклюзивность, а также разработка предложений по совершенствованию реализуемых инструментов и механизмов фискальной и бюджетной политики.

Для достижения поставленной цели в диссертации были намечены **следующие задачи**:

- Изучить эволюцию существующих концепций инклюзивности экономического роста, исследовать теоретические и методологические подходы к инклюзивности экономического роста и вмешательству в экономику с помощью фискальных и бюджетных инструментов.
- Изучить природу и взаимодействие фундаментальных макроэкономических факторов, определяющих инклюзивность экономического роста в Республике Армения.
- В рамках исследования оценить оптимальную налоговую нагрузку на экономику с точки зрения обеспечения инклюзивного экономического роста.
- С точки зрения содействия инклюзивному экономическому росту проанализировать и оценить краткосрочные и долгосрочные воздействия видов налогов в контексте изменений неравенства и выделить их количественные параметры и качественные аспекты.
- Исследовать влияние основных структурных элементов государственных расходов с точки зрения инклюзивности экономического роста, выяснить, какое сочетание направлений расходов государственного бюджета обеспечивает высокий уровень инклюзивности экономического роста.
- Изучить проявления так называемой проблемы «ловушки среднего дохода» с точки зрения экономического роста и инклюзивности фискальной политики.
- Проанализировать характер и особенности фискальной политики РА с точки зрения справедливого и равноправного перераспределения доходов и содействия инклюзивному экономическому росту.
- Изучить влияние внедрения комплексной системы медицинского страхования в контексте инклюзивного распределения доходов и преодоления неравенства среди населения РА.

- Изучить роль фискальной децентрализации в контексте фискальной инклюзивности, выявить возможности для разработки и внедрения новых механизмов в этой области.
- Изучить возможности введения механизма возмещения налога на добавленную стоимость с точки зрения воздействия на доходы государственного бюджета и смягчения неравенства.

Среди результатов анализов и исследований, проведенных в диссертации, **научной новизной** можно считать:

- На основе векторно-авторегрессионного моделирования (VAR) были выявлены долгосрочные тенденции взаимодействия экономического роста с производительностью, занятостью и инвестициями в условиях экономики Республики Армения. Соответственно, влияние производительности на экономический рост относительно больше, чем влияние инвестиций, и сопоставимо с влиянием занятости.
- На основе результатов панельно-регрессионного анализа макроэкономических показателей, рассчитан оптимальный уровень налоговой нагрузки и обосновано, что фактический уровень налоговой нагрузки в экономике РА постоянно превышала его расчетный оптимальный уровень, а налоговый импульс государственного бюджета на экономические процессы РА в значительной степени оказывал сдерживающее воздействие, что компенсировалось политикой стимулирования расходов.
- Разработан базовый сценарий движения оптимального уровня налоговой нагрузки и в результате моделирования предложен сформированный по выбранной методологии симуляционный сценарий, реализация которого позволит оптимальному уровню налоговой нагрузки достичь целевого показателя, официально рассматриваемого Правительством РА в среднесрочной перспективе, на основе прогнозируемой комбинации движения характеризующих инклюзивность выбранных макроэкономических показателей.
- В контексте анализа взаимосвязей между основными видами налогов, формирующих доходную часть государственного бюджета, и основными факторами, определяющими инклюзивность экономического роста, был разработан инструмент имитационного моделирования для оценки последствий перехода от прогрессивной к плоской системе подоходного налога с точки зрения справедливого распределения доходов, обосновывающий положение, согласно которому в Республике Армения в 2020-2023 годах переход к плоской системе подоходного налога углубил неравенство доходов.
- В результате оценки VAR-моделирования, с учетом существенного негативного влияния налога на прибыль на инвестиционную деятельность, предложен новый налоговый механизм, в частности, возможность признания реинвестированного дохода расходами предприятия и уменьшения его из базы по налогу на прибыль, что позволит несколько смягчить негативное влияние налогового рычага на инвестиционные проекты.
- Исходя из гипотезы «ловушки среднего дохода» на основе панельных моделей оценены влияние государственных расходов на образование и здравоохранение на развитие человеческого потенциала, а также индексы человеческого развития с поправкой на неравенство в странах группы доходов «средне-высокий», и предложены новые подходы к инклюзивной политике расходов в РА, которые позволят ограничить и сократить потери индекса человеческого развития из-за неравенства.
- На основе сценарного анализа, проведенного с использованием разработанного инструмента имитационного моделирования, проведена оценка фискальных последствий применения определенной доли механизма возмещения НДС по безналичным операциям, в частности, предложены определенные лимиты и параметры возмещения НДС, применение которых позволит получить положительные чистые фискальные эффекты.

FISCAL POLICY ISSUES OF ENSURING INCLUSIVE ECONOMIC GROWTH IN THE
REPUBLIC OF ARMENIA

The abstract of the dissertation is submitted for pursuing the degree of Ph.D. in Economics in the field 08.00.02 - “Economy, the economics of its spheres and control”.

The defense of the dissertation will take place at 14⁰⁰ on June 20, 2025 at the Meeting of Specialized Council 014 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia acting at the Armenia State University of Economics.

Address: 128 Nalbandyan Street, Yerevan, 0025, RA.

ABSTRACT

The dissertation is devoted to the issues of fiscal policy aimed at inclusive economic growth in the Republic of Armenia. **The main objective** of the study is to identify existing problems based on the study of the nature of economic growth in the Republic of Armenia and the main fiscal and budgetary instruments that ensure its inclusiveness, in particular, the established mechanisms of tax and expenditure policy, as well as the development of proposals for improving the implemented instruments and mechanisms of fiscal and budgetary policy.

To achieve the stated **goal**, the following tasks were outlined in the dissertation:

- To study the evolution of existing concepts on the inclusiveness of economic growth, to investigate the theoretical and methodological approaches to the inclusiveness of economic growth and intervention in the economy with fiscal and budgetary instruments.
- To study the nature and interactions of the macroeconomic fundamental factors determining the inclusiveness of economic growth in the Republic of Armenia.
- Within the framework of the research, to assess the optimal tax burden of the economy from the perspective of ensuring inclusive economic growth.
- From the perspective of promoting the inclusiveness of economic growth, to analyze and assess the short-term and long-term effects of tax types in the context of inequality shifts, to distinguish their quantitative parameters and qualitative aspects.
- To study the effects of the main structural elements of public spending from the perspective of the inclusiveness of economic growth, to identify and clarify which combination of expenditure directions of the state budget ensures a high level of inclusiveness of economic growth.
- To study the manifestations of the so-called “middle income trap” problem from the perspective of the inclusiveness of economic growth and fiscal and budgetary policy.
- Analyze the nature and features of the RA fiscal policy from the perspective of fair and equitable redistribution of income, promotion of inclusive economic growth.
- Investigate the effects of introducing a comprehensive health insurance system in the context of inclusive income distribution and overcoming inequality among the RA population.
- Study the role of fiscal decentralization in the context of fiscal inclusiveness, identify opportunities for developing and introducing new mechanisms in this area.
- Investigate the possibilities of introducing a value-added tax refund mechanism from the perspective of impacts on state budget revenues and inequality mitigation.

The dissertation's analyses and observations have yielded several **scientific novelties**, including:

- Based on vector-autoregressive modeling (VAR), the long-term trends of the interactions between economic growth and productivity, employment and investment in the RA conditions were revealed. Accordingly, the impact of productivity on economic growth is relatively greater than the impact of investment and comparable to the impact of employment.
- Based on the results of the panel-regression analysis of the macro-fundamentals determining fiscal inclusiveness, the optimal level of the tax burden was calculated and it was substantiated that over the past two decades the actual level of the tax burden in the RA economy has been continuously higher than its estimated optimal level, and the tax impulse of the state budget on the RA economic processes has largely had a restraining effect in the long term, which has been compensated by the expenditure-stimulating policy.
- A baseline scenario for the movement of the optimal level of the tax burden was developed and as a result of policy simulations, a simulation scenario formed by the selected methodology was proposed, the implementation of which will allow the optimal level of the tax burden to reach the target indicator officially considered by the RA Government in the medium term, based on the predicted combination of the movement of selected macroeconomic fundamentals and indicators characterizing inclusiveness.
- In the context of analyzing the interrelationships between the main types of taxes forming the revenue part of the state budget, the main factors determining the inclusiveness of economic growth: employment, productivity, investments, as well as inflation, a simulation tool was developed to assess the effects of the transition from a progressive income tax system to a flat system from the perspective of proportional income distribution, substantiating the proposition that the transition to a flat income tax system in the RA in 2020-2023 has deepened income inequality.
- As a result of the assessment using VAR modeling, taking into account the significant negative effects of profit tax on investment activity, a tax legislative mechanism was proposed, in particular, the possibility of recognizing reinvested income as a business expense and reducing it from the profit tax base, which will allow to somewhat mitigate the negative impact of the tax lever in the case of investment initiatives.
- Based on the hypothesis of the “middle income trap”, the effects of state education and health expenditures on human development, as well as inequality-adjusted human development indices in countries included in the “upper-middle” income group comparable to the Republic of Armenia, were assessed based on panel models, and new approaches to inclusive expenditure policy in the Republic of Armenia were proposed, which will limit and reduce the losses of the human development index due to inequality.
- Based on a scenario analysis conducted using a developed simulation tool, the fiscal impacts of applying a certain share of the VAT refund mechanism on non-cash transactions on the state budget were assessed, in particular, certain limits and parameters for VAT refund were calculated and proposed, the application of which will enable positive net fiscal impacts.

